Թարգմանություն անգլերեն լեզվից

ՀՈՒՇԱԳԻՐ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ԵՎ
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՎԱՐՉԱԿԱԶՄԻ ՄԻՋԵՎ

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեն և Ամերիկայի Միացյալ Նահանգների արդարադատության դեպարտամենտի թմրամիջոցների դեմ պայքարի վարչակազմը, այսուհետև՝ «Կողմերը»,

վերահաստատելով իրենց հավատարմությունը փոխշահավետ և իրավահավասար համագործակցության սկզբունքներին,

ելնելով թմրամիջոցների, հոգեմետ նյութերի (այսուհետ նաև՝ «թմրամիջոցներ») և դրանց համարժեք նյութ (անալոգների) ու պրեկուրսորների ապօրինի շրջանառությանը հակազդելու փոխադարձ շահագրգռվածությունից, Կողմ պետությունների ինքնիշխանության և ներքին գործերին չմիջամտելու սկզբունքին խիստ հարգանքով,

ընդունելով, որ թմրամիջոցների, դրանց անալոգների և պրեկուրսորների ապօրինի շրջանառությունը, ինչպես նաև դրանց չարաշահումները լուրջ վտանգ են ներկայացնում Կողմ պետությունների բնակչության առողջության և բարեկեցության համար,

ճանաչելով անդրազգային հանցավորության, այդ թվում՝ որոշ դեպքերում թմրանյութերի ապօրինի շրջանառության և ահաբեկչության միջև սերտ կապը,

արտահայտելով իրենց պատրաստակամությունը համագործակցելու միջազգային իրավունքի ընդունված սկզբունքներին և նորմերին համապատասխան,

Կողմերից յուրաքանչյուրը, գործելով իր ազգային օրենսդրության համապատասխան և իր լիազորությունների շրջանակներում, ձգտելու է համագործակցել հետևյալ կերպ.

Հոդված 1.
Նպատակը

Համագործակցության մասին սույն Հուշագրի (այսուհետ նաև՝ «Հուշագիր») Կողմերը, գործելով իրենց իրավասության սահմաններում և իրենց երկրների ազգային օրենսդրությանը և միջազգային պարտավորություններին համապատասխան, ձգտելու են համագործակցել թմրամիջոցների, դրանց անալոգների և պրեկուրսորների ապօրինի շրջանառության, ինչպես նաև այդ հանցավոր գործունեությունից բխող փողերի լվացման հետ կապված հանցագործությունների դեմ պայքարում:

Թարգմանությունն իրականացվել է ՀՀ Քննչական կոմիտեի թարգմանությունների կազմակերպման բաժնի կողմից

Ոլորտային համագործակցությունը կարգավորող այս ոչ պարտադիր Հուշագիրը կոչված չէ հակասելու փոխադարձ իրավական օգնության մասին բազմակողմ պայմանագրերի դրույթներին, որոնց մասնակից են ինչպես Ամերիկայի Միացյալ Նահանգները, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունը:

Հոդված 2.
Համագործակցություն

Սույն Հուշագրի իրականացման նպատակով Կողմերը մտադիր են համագործակցել հետևյալ ոլորտներում.

1) սույն Հուշագրի 1-ին հոդվածում քննարկվող համագործակցության շրջանակներում օպերատիվ տեղեկատվության փոխանակում և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվության վերլուծություն,

2) միջազգային խողովակներով ապօրինի թմրամիջոցների, դրանց անալոգների և պրեկուրսորների տեղափոխման կրճատմանն ուղղված երկկողմ գործողություններին (օպերացիաներին) մասնակցություն, այդ թվում՝ միջազգային հսկվող մատակարարումներին մասնակցություն, երբ դա անհրաժեշտ է,

3) թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների քննության և հետապնդման հետ կապված փոփոխությունների և լրացումների մասին միմյանց տեղեկացում,

4) անհրաժեշտության դեպքում վերլուծական կամ քննչական նպատակների համար նյութերի անհրաժեշտ քանակությունների տրամադրում,[1]

5) թմրամիջոցների, թմրամիջոցների համանման նյութերի և պրեկուրսոր քիմիական նյութերի ապօրինի շրջանառության հետ կապված դրամական միջոցների ապօրինի հոսքը կանխելու և հակազդելու նպատակով փոխադարձ համագործակցության ամրապնդման գործում օգնության ցուցաբերում,

6) անձնակազմի մասնագիտական զարգացման հետ կապված պաշտոնական և ոչ պաշտոնական հանդիպումներին, կոնֆերանսներին, թրեյնինգներին և այլ միջոցառումներին մասնակցություն,

7) միջազգային համագործակցության խթանում նոր հոգեակտիվ նյութերի և ամֆետամինային շարքի խթանիչների, այդ թվում՝ մետամֆետամինի, հակազդման գործում,

8) սույն Հուշագրին համապատասխան համագործակցության լրացուցիչ միջոցների մշակում կամ լրացուցիչ պայմանավորվածությունների մշակում:

Հոդված 3.
Համագործակցության զարգացում

[1] Ինչպես նշված է Միավորված ազգերի կազմակերպության թմրամիջոցների և հոգեներգործ նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին 1988 թվականի կոնվենցիայի 9-րդ հոդվածում:

Թարգմանությունն իրականացվել է ՀՀ Քննչական կոմիտեի թարգմանությունների կազմակերպման բաժնի կողմից

Կողմերն ակնկալում են, որ սույն Հուշագիրը խոչնդոտ չի հանդիսանա փոխադարձ ընդունելի այլ միջոցառումներին և համագործակցության ձևերին մասնակցություն ցուցաբերելու համար՝ համապատասխան սույն Հուշագրի 1-ին Հոդվածի կարգավորումներին:

Հոդված 4.
Տեղեկատվության փոխանակում

Սույն Հուշագրի շրջանակներում տեղեկատվության փոխանակումն իր մեջ ներառում, բայց չի սահմանափակվում միայն հետևյալ տեղեկատվությամբ.

1) Թմրամիջոցների, դրանց անալոգների և պրեկուրսորների մատակարարման աղբյուրները՝ ապօրինի շրջանառության համար, ինչպես նաև դրանց տարածումը դադարեցնելու համար օգտագործվող մեթոդները,

2) թմրավաճառների կողմից փոխադրման ժամանակ թմրանյութերը թաքցնելու եղանակները, ինչպես նաև իրավապահ մարմինների կողմից հայտնաբերման մեթոդները,

3) կոնկրետ փաստեր և հետազոտություններ՝ կապված այլ երկրների տարածքներից Հայաստանի Հանրապետության տարածք թմրամիջոցների, դրանց անալոգների և պրեկուրսորների անօրինական տեղափոխման կամ ապօրինի տեղափոխման ծրագրերի հետ,

4) թմրամիջոցների, դրանց անալոգների և պրեկուրսորների ապօրինի շրջանառության, այդ գործունեության արդյունքում ստացված եկամուտների լվացման հետ կապված փաստերը, միջադեպերը և հանգամանքները,

5) թմրամիջոցների, դրանց անալոգների և պրեկուրսորների փոխադրման երթուղիները,

6) թմրամիջոցների նոր տեսակները, դրանց անալոգները և պրեկուրսորները,

7) թմրամիջոցների, դրանց անալոգների և պրեկուրսորների ապօրինի շրջանառությունից ստացված եկամուտների լվացման ուղիներն ու մեթոդները,

8) արգելված նյութերի տեսակները, դրանց արտադրության տեխնոլոգիաները և ապօրինի շրջանառության մեջ դրանց օգտագործման նոր մեթոդները, այդ թվում՝ թմրամիջոցների հետ կապված հանցագործությունները, որոնք կատարվել են համակարգչային տեխնոլոգիաների և համացանցի օգտագործմամբ,

9) փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր, որոնք չեն հակասի «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքին:

Հոդված 5.
Օգնություն ցույց տալու մասին հարցում

Կողմերը մտադիր են սույն Հուշագրի հիման վրա համագործակցություն իրականացնել Կողմի կողմից օգնություն ցուցաբերելու խնդրանքի (հարցման)

Թարգմանությունն իրականացվել է ՀՀ Քննչական կոմիտեի թարգմանությունների կազմակերպման բաժնի կողմից

հիման վրա կամ Կողմի նախաձեռնությամբ, որը ենթադրում է, որ նման օգնությունը հետաքրքրություն է ներկայացնում մյուս Կողմի համար:

Օգնության խնդրանքները (հարցումները) սովորաբար ուղարկվում են գրավոր: Հրատապ դեպքերում հարցումները կարող են փոխանցվել բանավոր, բայց ակնկալվում է, որ դրանք կհաստատվեն գրավոր, այդ թվում՝ էլեկտրոնային փոստով կամ նմանատիպ էլեկտրոնային միջոցներով:

Հարցման արժանահավատության կամ բովանդակության վերաբերյալ կասկածներ առաջանալու դեպքում կարող է պահանջվել լրացուցիչ հաստատում:

Ակնկալվում է, որ օգնության հարցումը կպարունակի.

1) օգնություն հայցող Կողմի կողմից նշանակված պաշտոնատար անձի պաշտոնը, անվանումը,
2) հարցման էության շարադրանքը,
3) հարցման նպատակը և հիմնավորումը,
4) պահանջվող օգնության բովանդակության նկարագրությունը,
5) ցանկացած այլ տեղեկատվություն, որոնք չեն հակասի «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքին և որը կարող է օգտակար լինել հարցումը պատշաճ կատարելու համար:

Կողմերը մտադիր են ժամանակին կատարել մյուս Կողմի խնդրանքը: Հարցման պատասխանի ողջամիտ ժամկետը չպետք է գերազանցի 30 օրը, եթե հարցման մեջ այլ ժամկետ նշված չէ:

Եթե հնարավոր չէ կատարել կամ ժամանակին կատարել օգնության հարցումը, ապա հարցումը ստացած Կողմը կփորձի օպերատիվ կերպով տեղեկացնել մյուս Կողմին մերժման կամ ուշացման պատճառների և հարցման կատարման ակնկալվող ժամկետի մասին:

Կողմերից յուրաքանչյուրը կարող է մասնակիորեն կամ ամբողջությամբ հրաժարվել կատարել հարցումը սույն Հուշագրի 6-րդ հոդվածին համապատասխան:

Սույն Հուշագիրը նախատեսված չէ անձանց հանձնման կամ քրեական գործերով փոխադարձ իրավական օգնության պաշտոնական տրամադրման հետ կապված հարցերի լուծման համար, այդ թվում՝ այդպիսի օգնության տրամադրումը ուղղակիորեն թույլատրող մարմինների լիազորություններին համապատասխան:

Հոդված 6.
Օգնության մերժումը

Կողմերն ընդունում են, որ ցանկացած Կողմ կարող է մասնակիորեն կամ ամբողջությամբ հրաժարվել սույն Հուշագրում քննարկվող միջոցառումների կատարումից կամ սահմանափակել որոշակի պայմանների կատարումը, եթե, Կողմի կարծիքով, համագործակցությունը կարող է բացասաբար ազդել իր պետության

անվտանգության կամ շահերի վրա, հակասել ազգային օրենսդրությանը կամ միջազգային պարտավորություններին, խախտել մարդու իրավունքները կամ ցանկացած այլ պատճառով, որը նպատակահարմար կգտնի:

Կողմը, որը հրաժարվում է սույն Հուշագրին համապատասխան գործողություններ կատարել, կփորձի հնարավորինս շուտ գրավոր տեղեկացնել մյուս Կողմին նման մերժման պատճառների մասին:

Հոդված 7.
Ստացված տեղեկությունների և փաստաթղթերի սահմանափակ օգտագործումը

Կողմերը մտադիր են պահպանել սույն Հուշագրի շրջանակներում ստացված տեղեկատվության գաղտնիությունը:

Կողմերը կձեռնարկեն միջոցներ չօգտագործել սույն Հուշագրի շրջանակներում ստացված տեղեկությունները, իրերը և փաստաթղթերը՝ սկզբնական հարցման մեջ նշվածներից տարբեր նպատակներով, ինչպես նաև միջոցներ կձեռնարկեն չփոխանցել այդպիսի տեղեկությունները, իրերը և փաստաթղթերը այլ երրորդ կողմին առանց տեղեկությունները, իրերը և փաստաթղթերը տրամադրած տվյալ Կողմի նախնական գրավոր համաձայնության: Գրավոր համաձայնությունը ստանալուց հետո՝ պետք է Կողմը համոզվի, որ այլ երրորդ կողմն իրավունք ունի առնչվելու գաղտնի տեղեկատվություն պարունակող փաստաթղթերի հետ:

Կողմերը կարող են իրականացնել իրենց համապատասխան տվյալների շտեմարաններում տեղադրված տեղեկությունների և նյութերի փոխադարձ փոխանակում:

Անհրաժեշտության դեպքում Կողմերը կարող են լրացուցիչ փոխադարձ որոշում ընդունել օպերատիվ-հետախուզական տեղեկատվական գործունեության հետ կապված տեղեկատվության կամ նյութերի օգտագործման կոնկրետ պայմանների և կանոնների վերաբերյալ, որոնք իրականացվում են երկկողմ հիմունքներով:

Հոդված 8.
Համագործակցության և լեզվի համակարգումը

Սույն Հուշագրի իրականացման նպատակով ակնկալվում է, որ Կողմերը միմյանց տեղեկատվություն կտրամադրեն համագործակցության համակարգման համար պատասխանատու ստորաբաժանումների կամ անձանց վերաբերյալ պահպանելով «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի

Թարգմանությունն իրականացվել է ՀՀ Քննչական կոմիտեի թարգմանությունների կազմակերպման բաժնի կողմից

պահանջները և անմիջապես կտեղեկացնեն միմյանց տվյալ անձանց անունների, իրավասությունների և կոնտակտային տվյալների հետ կապված ցանկացած փոփոխությունների մասին:

Սույն Հուշագրի համագործակցության շրջանակներում կարող են օգտագործվել անգլերեն և հայերեն լեզուները, եթե Կողմերն այլ բան չնշեն յուրաքանչյուր կոնկրետ գործով:

Հոդված 9.
Հանրայնացում

Ամերիկայի Միացյալ Նահանգներում սույն Հուշագիրը զերծ կմնա հանրայնացումից Ամերիկայի Միացյալ Նահանգների «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի համաձայն (Գլուխ 5, բաժին 552):

Հոդված 10.
Ծախսերը

Ակնկալվում է, որ յուրաքանչյուր Կողմ պատասխանատու կլինի սույն Հուշագրի իրականացման հետ կապված իր սեփական ծախսերի համար, Կողմի համար տվյալ երկրի ազգային օրենսդրությամբ հատկացված բյուջեի շրջանակներում, եթե Կողմերն այլ բան չորոշեն յուրաքանչյուր կոնկրետ գործով կոնկրետ հարցերում:

Հոդված 11.
Վեճերի լուծում

Կողմերն ակնկալում են, որ իրենց միջև ցանկացած վեճ, որը կառաջանա սույն Հուշագրի դրույթների մեկնաբանման կամ կիրառման հետ կապված, կկարգավորվի խորհրդակցությունների և քննարկումների միջոցով:

Հոդված 12.
Փոփոխություններ

Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ և փոխադարձ համաձայնությամբ Սույն հուշագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք կձևակերպվեն առանձին արձանագրությունների տեսքով և ուժի մեջ կմտնեն սույն Հուշագրի ուժի մեջ մտնելու համար սահմանված կարգով:

Հոդված 13.
Կապը միջազգային համաձայնագրերի հետ

Թարգմանությունն իրականացվել է ՀՀ Քննչական կոմիտեի թարգմանությունների կազմակերպման բաժնի կողմից

Սույն Հուշագիրը, որը կարգավորում է ոլորտային համագործակցությունը, միջազգային պայմանագիր չէ և չունի պարտադիր իրավաբանական ուժ և կոչված չէ ազդելու Կողմերի այն իրավունքների կամ պարտականությունների վրա, որոնք բխում են այլ միջազգային համաձայնագրերից, որոնց մասնակիցն են Կողմերը կամ նրանց երկրները:

Հոդված 14.
Սույն Հուշագրի գործողության սկիզբը և դադարեցումը

Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում երկու Կողմերի լիազոր ներկայացուցչների ստորագրման պահից և կգործի անորոշ ժամանակով:

Կողմը, որը ցանկանում է դադարեցնել իր մասնակցությունը սույն Հուշագրին, պետք է իր մտադրության մասին 30 օր առաջ գրավոր ծանուցում ներկայացնի մյուս Կողմին:

Ստորագրվել է 2024 թվականի փետրվարի 14-ին երկու բնօրինակից՝ անգլերեն և հայերեն լեզուներով:

Ընդ որում՝ բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի անունից	**Ամերիկայի Միացյալ Նահանգների արդարադատության դեպարտամենտի թմրամիջոցների դեմ պայքարի վարչության անունից**
ՀՀ քննչական կոմիտեի Նախագահի տեղակալ	**Մերձավոր արևելքի բաժնի պատասխանատու հատուկ գործակալ**
Արսեն Այվազյան	**Միխայել Ռժեպչինսկի**

Թարգմանությունն իրականացվել է ՀՀ Քննչական կոմիտեի թարգմանությունների կազմակերպման բաժնի կողմից